ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԿԱԳ ԲԱԺՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՉՔ-ՄԱԱՊՁԲ-18/3

ք. Չարենցավան <<20>> 03 2018թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **Ա/Ձ Արշալույս Գևորգյանը**, ի դեմս **Ա. Գևորգյանի,** որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5 (հինգ)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **5 (հինգ)** օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տասը)** աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,

ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի <<Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ>> բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **18 (տասնութ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
Չարենցավանի համայնքապետարան	**Ա/Ձ Արշալույս Գևորգյան**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան	**ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս,**
հրապարակ թիվ 1	**12-րդ շենք, 36 բնակարան**
ՀՀ ՖՆ ԳՎ	**<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ**
Հ/Հ 900132188021	**Հ/Հ 1930061198150100**
ՀՎՀՀ 03022497	**ՀՎՀՀ 83539703**
	էլ. հասցեն arshaluysgevorgyan@mail.ru
	Հեռ. (094) 80-11-99
Համայնքի ղեկավար՝	**Ա. Գևորգյան**
Հ. Կ. Շահգալդյան	
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	

Հավելված N 1
<<20>> <<03>> 2018թ. կնքված
N <<ՀՔ-ՄԱԱՊՁԲ-18/3>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30197631	Թուղթ, A4 ֆորմատի	-	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ², (210X297) մմ.	տուփ	1600	46400	29	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	29	31.12.2018թ.
2	30192121	Գրիչ, գնդիկավոր	-	Գնդիկավոր, տարբեր գույների, 0,5 մմ ծայրով, մեծ չափի	հատ	100	500	5	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	5	31.12.2018թ.
3	30199420	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	-	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս	հատ	250	750	3	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	3	31.12.2018թ.
4	30197321	Կարիչ, մինչև 20 թերթի համար	-	Գրասենյակային կարիչ, մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	700	700	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ	1	31.12.2018թ.

									թիվ 1		
5	30197340	Ապակարիչ	-	Գրասենյակային ապակարիչ՝ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար	հատ	250	250	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
6	30192710	Սոսնձամատիտ, գրասենյակային	-	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար	հատ	300	600	2	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	2	31.12.2018թ.
7	39263410	Ամրակ, մետաղյա, փոքր	-	Փոքր, գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ	տուփ	150	300	2	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	2	31.12.2018թ.
8	39263420	Ամրակ, մետաղյա, մեծ	-	Գրասենյակային ամրակներ, մետաղական, 50 մմ չափի թղթի տրցակները ամրացնելու համար	տուփ	250	500	2	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	2	31.12.2018թ.
9	30192720	Գծանշիչ	-	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով	հատ	200	600	3	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	3	31.12.2018թ.
10	30192137	Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ	-	Հասարակ, սև համապատասխան կարծրությամբ	հատ	250	250	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ	1	31.12.2018թ.

									թիվ 1		
11	30197111	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	-	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ	տուփ	100	300	3	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	3	31.12.2018թ.
12	30141200	Հաշվասարք, գրասենյակային	-	12 նիշանի սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	հատ	1500	1500	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
13	39292500	Քանոն	-	Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30 սմ, պլաստմասե	հատ	250	500	2	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	2	31.12.2018թ.
14	39263520	Սեղմակ, միջին	-	Մետաղական, լայնությունը 25 մմ	տուփ	600	600	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
15	30192100	Ռետին, հասարակ	-	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար	հատ	100	100	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
16	30192760	Սրիչ, սովորական	-	Սրիչ գրաֆիտե մատիտի համար	հատ	100	100	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
17	39241140	Դանակ, գրասենյակային, մետաղյա	-	Սայրի լայնությունը 9 մմ, 18 մմ ՝ թուղթ կտրելու համար	հատ	100	100	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան	1	31.12.2018թ.

									հրապարակ թիվ 1		
18	39241210	Մկրատ, գրասենյակային	-	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18 սմ երկարությամբ	հատ	200	200	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
19	30197231	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	-	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն	հատ	10	1000	100	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	100	31.12.2018թ.
20	30197232	Թղթապանակ, արագակար, թղթյա	-	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	100	400	4	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	4	31.12.2018թ.
21	30197233	Թղթապանակ, թղթյա, թելով	-	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ^3 , հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ	հատ	100	400	4	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	4	31.12.2018թ.
22	30197234	Թղթապանակ, կոշտ կազմով	-	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար	հատ	1000	2000	2	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	2	31.12.2018թ.
23	30234300	Սկավառակներ, առանց տուփի,	-	Սկավառակներ, առանց տուփի, CD	հատ	100	500	5	ք. Չարենցավան	5	31.12.2018թ.

		CD							Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1		
24	30234400	Սկավառակներ, առանց տուփի, DVD	-	Սկավառակներ, առանց տուփի, DVD	հատ	150	750	5	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	5	31.12.2018թ.
25	30197322	Կարիչ, 20-50 թերթի համար	-	Գրասենյակային կարիչ, 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1500	3000	2	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	2	31.12.2018թ.
26	30193700	Թղթադարակ, հարկերով, պլաստմասե	-	Պլաստմասե, 3 նիստով, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	4000	4000	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
27	39263600	Գրչատուփ, գրասենյակային	-	Մետաղական, ցանցով, տարբեր ձևավորումներով	հատ	700	700	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.
28	30197121	Կոճգամ, երկաթյա	-	Մետաղյա, սովորական	տուփ	100	300	3	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	3	31.12.2018թ.
29	30197122	Կոճգամ, պլաստմասե գլխիկով	-	Գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով	տուփ	300	900	3	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	3	31.12.2018թ.
30	30192781	Էջաբաժանիչ,	-	Էջաբաժանիչ՝ կպչուն	հատ	450	900	2	ք.	2	31.12.2018թ.

		թղթե							Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1		
31	30192782	Էջաբաժանիչ, պլաստիկ	-	A4 ձևաչափի, պլաստիկից, 20 թվային բաժանիչներով	հատ	900	900	1	Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	1	31.12.2018թ.

<<ԳՆՈՐԴ>>
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132188021
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
Ա/Ձ Արշալույս Գևորգյան
ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս,
12-րդ շենք, 36 բնակարան
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930061198150100
ՀՎՀՀ 83539703
էլ. հասցեն arshaluysgevorgyan@mail.ru
Հեռ. (094) 80-11-99

Ա. Գևորգյան

(ստորագրությունը)

Հավելված N 2
<<20>> <<03>> 2018թ. կնքված
N <<ՀՔ-ՄԱԱՊՁԲ-18/3>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30197631	Թուղթ, A4 ֆորմատի	0	0	4640	9280	13920	18560	23200	27840	32480	37120	41760	46400	46400
2	30192121	Գրիչ, գնդիկավոր	0	0	50	100	150	200	250	300	350	400	450	500	500
3	30199420	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	0	0	75	150	225	300	375	450	525	600	675	750	750
4	30197321	Կարիչ, մինչև 20 թերթի համար	0	0	70	140	210	280	350	420	490	560	630	700	700
5	30197340	Ապակարիչ	0	0	25	50	75	100	125	150	175	200	225	250	250

6	30192710	Սոսնձամատիտ, գրասենյակային	0	0	60	120	180	240	300	360	420	480	540	600	600
7	39263410	Ամրակ, մետաղյա, փոքր	0	0	30	60	90	120	150	180	210	240	270	300	300
8	39263420	Ամրակ, մետաղյա, մեծ	0	0	50	100	150	200	250	300	350	400	450	500	500
9	30192720	Գծանշիչ	0	0	60	120	180	240	300	360	420	480	540	600	600
10	30192137	Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ	0	0	25	50	75	100	125	150	175	200	225	250	250
11	30197111	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	0	0	30	60	90	120	150	180	210	240	270	300	300
12	30141200	Հաշվասարք, գրասենյակային	0	0	150	300	450	600	750	900	1050	1200	1350	1500	1500
13	39292500	Քանոն	0	0	50	100	150	200	250	300	350	400	450	500	500

14	39263520	Սեղմակ, միջին	0	0	60	120	180	240	300	360	420	480	540	600	600
15	30192100	Ռետին, հասարակ	0	0	10	20	30	40	50	60	70	80	90	100	100
16	30192760	Սրիչ, սովորական	0	0	10	20	30	40	50	60	70	80	90	100	100
17	39241140	Դանակ, գրասենյակային, մետաղյա	0	0	10	20	30	40	50	60	70	80	90	100	100
18	39241210	Մկրատ, գրասենյակային	0	0	20	40	60	80	100	120	140	160	180	200	200
19	30197231	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	0	0	100	200	300	400	500	600	700	800	900	1000	1000
20	30197232	Թղթապանակ, արագակար, թղթյա	0	0	40	80	120	160	200	240	280	320	360	400	400
21	30197233	Թղթապանակ, թղթյա, թելով	0	0	40	80	120	160	200	240	280	320	360	400	400

22	30197234	Թղթապանակ, կոշտ կազմով	0	0	200	400	600	800	1000	1200	1400	1600	1800	2000	2000
23	30234300	Սկավառակներ, առանց տուփի, CD	0	0	50	100	150	200	250	300	350	400	450	500	500
24	30234400	Սկավառակներ, առանց տուփի, DVD	0	0	75	150	225	300	375	450	525	600	675	750	750
25	30197322	Կարիչ, 20-50 թերթի համար	0	0	300	600	900	1200	1500	1800	2100	2400	2700	3000	3000
26	30193700	Թղթադարակ, հարկերով, պլաստմասե	0	0	400	800	1200	1600	2000	2400	2800	3200	3600	4000	4000
27	39263600	Գրչատուփ, դրասենյակային	0	0	70	140	210	280	350	420	490	560	630	700	700
28	30197121	Կոճգամ, երկաթյա	0	0	30	60	90	120	150	180	210	240	270	300	300
29	30197122	Կոճգամ, պլաստմասե գլխիկով	0	0	90	180	270	360	450	540	630	720	810	900	900

30	30192781	Էջաբաժանիչ, թղթե	0	0	90	180	270	360	450	540	630	720	810	900	900
31	30192782	Էջաբաժանիչ, պլաստիկ	0	0	90	180	270	360	450	540	630	720	810	900	900

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

<<ԳՆՈՐԴ>>
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132188021
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
L.S

<<ՎԱՃԱՌՈՂ>>
Ա/Ձ Արշալույս Գևորգյան
ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս,
12-րդ շենք, 36 բնակարան
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930061198150100
ՀՎՀՀ 83539703
էլ. հասցեն arshaluysgevorgyan@mail.ru
Հեռ. (094) 80-11-99

Ա. Գևորգյան

(ստորագրությունը)